

### 5.3. 2012 թվականի ապրիլ ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, ապրիլին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 2 աստիճանով, ՀՀ Լոռու, Տավուշի մարզերում և Սյունիքի հովիտներում՝ 3-4 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 2-3 աստիճանով (ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում՝ 3-4 աստիճանով):

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +22 +25°C, Արարատյան դաշտավայրում՝ +21 +23°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +19 +23°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +15 +19°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +11 +16°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի 26-27-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +24 +28°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ +22 +26°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +22 +27°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +17 +22°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ +14 +19°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում կազմել է -2 +3°C, ՀՀ Լոռու մարզում՝ +3 +6°C, Սյունիքի նախալեռներում՝ +2 +7°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +4 +9°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +7 +12°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է ապրիլի 1-4-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում, Սյունիքի նախալեռներում գրանցվել է -2 -7°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -11°C), ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ -3 +1°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ 0 +3°C, Սյունիքի հովիտներում՝ +2 +7°C:

Ամսական տեղումների քանակը եղել է նորմայից ցածր: ՀՀ Կոտայքի և Շիրակի մարզերում այն կազմել է նորմայի 58-93%-ը, Արարատյան դաշտավայրում՝ 40-90%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 40-85%, ՀՀ Լոռու մարզում՝ 26-73%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 25-53%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 16-65% և ՀՀ Տավուշի մարզում՝ 10-34%:

Ապրիլի 1-ին, 3-ին, 19-ին և 28-30-ին տարածաշրջանների զգալի մասում, 2-ին, 8-12-ին, 17-ին, 20-21-ին և 24-27-ին առանձին վայրերում դիտվել են տեղումներ:

Ապրիլի 30-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը պահպանվել է 2800 մ և ավելի բարձրությունների վրա, Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) այն կազմել է 131 սմ:

Ապրիլի 2-4-ին և 11-12-ին ՀՀ Արարատի և Շիրակի մարզերի առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Ապրիլի 2-ին, 8-9-ին և 19-20-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 12-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-22 մ/վրկ (Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 43 մ/վրկ): Ապրիլի 17-ին ք.Եղեգնաձորում (ՀՀ Վայոց ձորի մարզ) դիտվել է ուժեղ անձրև (30 մմ/6 ժամ): Ապրիլի 19-ին ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ) դիտվել է կարկուտ 0.8 սմ տրամագծով:

Հանրապետության հյուսիսային շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 60-90%-ը, մնացած շրջանների գետերում՝ 110-150%:

Սևանա լճի մակարդակն ապրիլ ամսվա ընթացքում բարձրացել է 9 սմ-ով և ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1900.32 մ, որը 2011թ. նույն օրվա համեմատ բարձր է 17 սմ-ով: